

**Հայաստան ծառատունկ ծրագիրը կազմակերպում է «Հայաստանի կանաչապատ քաղաք» խորագրով մրցույթ Հանրապետության վեց գյուղերում**

Երևան – Հայաստան ծառատունկ ծրագիրը (պաշտոնապես՝ «Էյ-Թի-Փի» բարեգործական Հիմնադրամ) նախաձեռնեց «Հայաստանի կանաչապատ քաղաք» մրցույթը, որի նպատակն է խրախուսել Կոտայքի, Արմավիրի և Արագածոտնի մարզերի վեց գյուղերում տնկված դեկորատիվ և պտղատու ծառերի խնամքը: Մրցույթի գաղափարն առաջարկել էր Հիմնադրամի գործադիր կոմիտեի անդամ Մուրադ Մուրադյանը որպես Հիմք ունենալով Առբր Դեյ ֆաունդեյշն կազմակերպության կողմից անցկացված «ԱՄՆ-ի կանաչապատ քաղաք» Համանուն մրցույթի մոդելը:

Որպես նախաձեռնության սկզբնական փուլ «Էյ-Թի-Փի» բարեգործական Հիմնադրամը իրականացրեց կարիքների և պայմանների գնահատում Արտաշար, Իրինդ, Կարմրաշեն, Նոր Արտամետ, Ծախունկ և Ջորավան գյուղերում: Այնուհետև թվարկված գյուղերի ընտանիքների հետ միասին կազմակերպությունը տասնյակ ընտրված Համայնքային վայրերում տնկեց դեկորատիվ և պտղատու ծառեր: Նախաձեռնության նպատակն էր խրախուսել գյուղացիներին, որպեսզի վերջիններս աճեցնեն և խնամեն ընտանիքներին հանձնված տնկիները՝ ավելի բարձր արդյունքների հասնելու ակնկալիքով:

2007 թ-ին յուրաքանչյուր ընտանիքի հատկացվեց մի քանի պղատու ծառ, ևս երկուական ծառ բաժանվեց 2008 թ-ին: Մասնակից գյուղերում արձանագրվեց կպչողականության բավականին բարձր տոկոս՝ 96-98, ինչը կազմակերպության համոզմամբ ապագայում օրինակ կծառայի այլ գյուղերի և Համայնքների համար:

Արդյունքների ստուգման նպատակով տեղի ունեցած այցելությունից հետո «Հայաստանի կանաչապատ քաղաք» մրցույթի Հաղթողների անունները Հայտարարվեցին «Էյ-Թի-Փի» Հիմնադրամի երևանյան գրասենյակում կազմակերպած մրցանակաբաշխության արարողության ժամանակ՝ 2008 թ-ի դեկտեմբերի 11-ին:

«Էյ-Թի-Փի» բարեգործական Հիմնադրամի Համայնքային ծառատունկ ծրագրի ղեկավար Անահիտ Ղարիբյանը միջոցառման բացմանը իր անկեղծ ողջույնի խոսքը ուղղեց բոլոր մասնակիցներին և Հյուրերին՝ շեշտելով մրցույթում ընդգրկված Համայնքների դերի կարևորությունը Հայաստանի բարգավաճման և գալիք սերունդների համար արժանի ապագա կերտելու գործում: «Քանի որ նշված Համայնքները ցուցաբերեցին անսպասելիորեն բարձր արդյունքներ, մենք որոշեցինք հատկացնել լրացուցիչ պտղատու ծառեր և թարմացնել մեր կողմից Համայնքներում Հիմնված պտղատու այգիները», ասաց Ղարիբյանը: «Էյ-Թի-Փի» բարեգործական Հիմնադրամին հեշտ չէր որոշել, թե որ գյուղին է հանձնվելու առաջին պատվավոր մրցանակը, քանի որ բոլոր Համայնքները բացառիկ հոգատարություն և գովելի խնամք ցուցաբերեցին ծառերի նկատմամբ»:

«Էյ-Թի-Փի» բարեգործական Հիմնադրամի երևանյան գրասենյակի տնօրենը՝ Մհեր Սադոյանը, շնորհավորեց Հաղթող գյուղերի Համայնքների ղեկավարներին և խոստացավ շարունակել իրենց հետ արդյունավետ Համագործակցությունը նաև 2009 թ-ին: «Մենք ցանկանում ենք շարունակել մեր միասնական աշխատանքը օգնելով սակավաթիվ պաշարներ ունեցող Համայնքներին ոտքի կանգնել՝ մասնավորապես,

իրականացնելով Հանրային վայրերի կանաչապատման աշխատանքներ», ասաց Սադոյանը:

Առաջին մրցանակը Հանձնվեց Արտաշարի գյուղապետին՝ գյուղում արձանագրված տնկիների կաշողականության առավել բարձր 98 տոկոս ապահովելու դիմաց: «Արտաշարի բնակչության թիվը Հասնում է 1,800-ի և, ցավոք, բնակչության կենսամակարդակը շատ ցածր է», բացատրեց գյուղապետ Մանվել Օհանյանը: «Թվում էր, թե մեր Համայնքում բացարձակ անհնար կլինի ծառեր աճեցնել. մենք երախտապարտ ենք «Էյ-Թի-Փի» բարեգործական Հիմնադրամին Համայնքում ծառատունկ իրականացնելու համար: Բոլոր բնակիչները ջանք ու եռանդ չխնամեցին մեր ծառերը փայփայելու և աճեցնելու համար: Ես հպարտ եմ ստանալու այս հրաշալի մրցանակը՝ ի գնահատումն մեր կատարած աշխատանքի: Այն պատկանում է յուրաքանչյուր ընտանիքին և անհատին, ով օգնեց մեր ոչ բերրի հողի վրա աճեցնել գեղեցիկ ծառեր: Անձամբ ինձ համար այս պահը շատ հուզիչ է և ոգեշնչող»:

Բոլոր վեց մրցակից գյուղերի ներկայացուցիչները ստացան շնորհակալագրեր իրենց Համայնքների կանաչապատման աշխատանքի, ինչպես նաև իրենց մարզերում սոցիալ-տնտեսական զարգացումը խթանելու համար: Բոլոր գյուղական վայրերն այսօր պատրաստ են ստանալ «Էյ-Թի-Փի»-ի նվիրատուների հովանավորությունը, քանի որ դրանք հետագա ներդրումների լավագույն մոդելներ են Հանդիսանում:

2004 թ-ից ի վեր, Հիմնադրամի Համայնքային ծառատունկ ծրագիրը սկսեց Համագործակցել 15 գյուղերի հետ՝ 5,572 ընտանիքների միջև բաշխելով ծիրանի, վայրի խնձորի, դեղձի և տանձի ծառեր: 2008 թ-ին Հայաստանի 115 բնակավայրերի բնակիչները Հայաստան ծառատունկ ծրագրի հետ Համատեղ կատարած աշխատանքի արդյունքում շուրջ 227,439 կգ մրգի բերք հավաքեցին: 1,620 ընտանիքներ արդեն տնկել են 19,458 ծառ՝ կազմակերպության նախաձեռնած «Հայաստանի կանաչապատ քաղաք» ծրագրի շրջանակներում:

1994 թ-ից ի վեր, Հայաստան ծառատունկ ծրագրի («Էյ-Թի-Փի» բարեգործական Հիմնադրամ) կողմից տնկվել է ավելի քան 2,500,000 (2,5 միլիոն) ծառ Հայաստանի բոլոր շրջաններում: Ծառերի վերարտադրության և ծառատունկի աշխատանքների մեջ են ընդգրկվել Հայաստանի անապահով խավի բազում ներկայացուցիչներ, սեզոնային աշխատատեղեր են ստեղծվել հարյուրավոր մարդկանց համար: Կազմակերպության եռամակարդակ նախաձեռնություններն են՝ ծառատունկը, աղքատության նվազեցմանն ու ինքնաբավության խթանմանն ուղղված Համայնքային զարգացման ծրագրերը, ինչպես նաև Հայաստանի արժեքավոր բնական պաշարների պաշտպանությանը նպաստող բնապահպանական կրթությունը: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ [www.armeniatree.org](http://www.armeniatree.org).